

ՆԻԿԵԱՅԻ ԵՐՐՈՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նիկեայի 325 թ. տիեզերական ժողովը երրորդաբանական վիճաբանությունների հանգուցալուծումն է, յուրահատուկ մի ջրբաժան, որն աստվածաբանության և դոգմատիկայի պատմության համակարգում որակվում է իբրև երրորդաբանության և հակաերրորդաբանության վերջնական տարանջատման սահմանագիծ: Ժողովի Հավատո հանգանակն ընկած է ավանդական բոլոր եկեղեցիների դավանաբանության հիմքում, ինչը վկայում է, որ տիեզերական ժողովի որոշումները եկեղեցու համար պատմական և դավանաբանական դարակազմիկ նշանակություն են ունեցել:

Եվ չնայած այդ ամենին (գուցե և հենց այդ պատճառով)՝ ժողովի շուրջ վիճաբանական հարցեր են ձևավորվել այն պատճառով, որ հիմնահարցի վերաբերյալ աստվածաբանական, եկեղեցագիտական և դոգմատիկայի պատմությանը նվիրված մատենագրությունը, հանդես գալով այս կամ այն եկեղեցական հոսանքի շահերի պաշտպանության դիրքերից, միակողմանի է ներկայացնում հիմնահարցի էությունը, և այդ սուբյեկտիվ դիրքորոշման պատճառով ժողովական գործընթացների վերլուծության ոլորտում տեղ են գտել իրարամերժ տեսակետներ:

Կարծում ենք, նշված միակողմանիությունները կարելի է հաղթահարել օբյեկտիվ կրոնագիտական վերլուծությամբ՝ այդ գործընթացում արժևորելով ինչպես անհատական, այնպես էլ խմբային (եկեղեցական) դրսևորումները: Վավերագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հիմնահարցի շրջանակներում չպետք է աչքաթող անել չափազանց էական ևս մեկ փաստ՝ IV-V դարերի տիեզերական ժողովները սերտորեն կապված էին դարաշրջանի աստվածաբանական դպրոցների գործունեությանը և, կարելի է ասել, խտացված ձևով վերարտադրում էին դրանց աստվածաբանական և դոգմատիկական ըմբռումները:

Այդ ամենը թույլ են տալիս պնդել, որ Նիկեայի 325 թ. տիեզերական ժողովը ոչ թե անհատների, այլ եկեղեցու համախմբվածության և հավաքական կամքի արտահայտությունն էր: Փաստը՝ Հիսուս Քրիստոսի աստվածային էության (բնության), ինչպես նաև Հայր և Որդի Աստծու փոխհարաբերության հարցի երրորդաբանական լուծումն էր: Թե քննարկումներն ինչ ընթացք են ունեցել, մեզ լիովին հայտնի չէ, քանի որ այդ մասին տեղեկությունները բավականին աղքատիկ են ու հատվածական: Եվ պատահական չէ, որ նիկեական քննարկումների վերաբերյալ կարելի է հանդիպել ամենատարբեր, երբեմն՝ ուղղակի հակադիր տեսակետների: Այդ կապակցությամբ բնութագրական պետք է համարել ժողովականների, ինչպես նաև ժողովական քննարկումների մասին Ա. Լեբեդևի հետևյալ տողերը. «Նիկեական ժողովը հրավիրվել էր եկեղեցական վիճաբանության հարց լուծելու համար, դրա համար էլ բնական էր, որ ժողովականները միասնական չէին ոգով, միասնական չէին իրենց հայացքներով և ձգտումներով: Եթե նրանք միևնույն տեսակետն ունենային, միավորված լինեին նույնական դոգմատիկական տրամադրվածությամբ, ապա ժողովի կարիք չէր զգացվի: Վիճաբանական հարցի համար ժողովի հրավիրումը վկայում է, որ

եկեղեցում լիակատար միասնություն չկար, ինչը չէր կարող լինել նաև ժողովում (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»¹:

Քանի որ քննարկվող շրջանում Հայր և Որդի Աստուծու էության և փոխհարաբերության հիմնահարցը համաքրիստոնեական նշանակություն էր ձեռք բերել, ապա առավել օբյեկտիվ և իրականությանն առավել մերձ պետք է համարել այն պնդումը, թե Նիկեայի 325 թ. «... ժողովում դոգմատիկական որևէ կուսակցության նախապատվություն չի տրվել, ժողովականները նախապես այնպես չեն ընտրվել, որ ի մի գալով՝ համաձայնեցված դավանանք շարադրեին: Հավասար իրավունքներով ժողովին մասնակցում էին և՛ հետևողական ուղղադավանության ներկայացուցիչներ, և՛ ուղղադավան ճշմարտության նկատմամբ տատանվողներ և անգամ ուղղադավանությանն ուղղակի հակադրվողներ»²: **Նիկեական ժողովին բնորոշ այդ առանձնահատկությունն անտեսել՝ նշանակում է մեղանչել ճշմարտության դեմ:**

Այդ եզրահանգումը կարելի է հիմնավորել բազմաթիվ փաստերով: Գաղտնիք չէ, որ Արիոսի և նրա համախոհների դեմ մղվող պայքարում քրիստոնեական արևելքը երկատվեց, իսկ արևմուտքը բացարձակ անտարբերություն որդեգրեց: Ալեքսանդր Ալեքսանդրացու «Էնցիկլիկոնը» և Ալեքսանդր Թեսաղոնիկեցուն հղված շրջաբերականն ակնհայտորեն ցույց են տալիս, որ քրիստոնեական արևելքն իր որդեգրած կողմնորոշումների պատճառով արդեն իսկ սպառել էր միասնության բոլոր հնարավորությունները: Մյուս կողմից, Հռոմի Սիլվեստր քահանայապետն այդ փուլում գերադասեց լռություն պահպանել, ինչը մասնագիտական գրականության մեջ «բացատրվում» է նրանով, թե քահանայապետի կարծիքով հակաարիոսական ճամբար անցնելը կնշանակեր դուրս գալ Կոստանդին կայսեր հովանավորությունը վայելող Եվսեբիոս Նիկոմեդացու (հետևաբար՝ կայսեր) դեմ³: Ահա այդ ամենն էլ օբյեկտիվորեն պայմանավորեցին այն, որ միայն «... քննարկումները կարող էին հաստատել կեղծիքի նկատմամբ ճշմարտության առավելությունը, քննարկումների ընթացքում պետք է արտահայտվեր ճշմարտության ուժը և մոլորության թուլությունը (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)»⁴:

Դատելով պահպանված տեղեկություններից՝ 325 թ. կեսերին սկսված⁵ տիեզերաժողովի աշխատանքներին մասնակցել են 250-320 (ընդունված ավանդույ-

¹ **Лебедев А. П.** Вселенские Соборы IV и V вековъ (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениемъ школъ александрийской и антиохійской). СПб., 1904, с. 18.

² Նույն տեղում:

³ Այդ մասին տե՛ս **Карташев А. В.** Вселенские Соборы. СПб., 2002, с. 21.

⁴ **Лебедев А. П.** Вселенские Соборы IV и V вековъ (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениемъ школъ александрийской и антиохійской), с. 18-19.

⁵ Հենվելով Աթանաս Ալեքսանդրացու խմբագրությունների վրա՝ Սոկրատես պատմիչը հավաստում է, որ Նիկեայի ժողովն իր աշխատանքներն սկսել է Անիցիոս Պավլինոսի և Անիցիոս Հուլիանոսի կոնսուլության շրջանում, Ալեքսանդր Մակեդոնացու դարաշրջանի 636 թ., այսինքն 325 թ., մայիսի 20-ին (տե՛ս **Сократ Схоластик.** Церковная история. М., 1994, кн. I, гл. 13, с. 36): Սակայն Քաղկեդոնի ժողովում Եվմոնիոս Նիկոմեդացու կողմից ընթերցված Նի-

թի համաձայն՝ 318) եպիսկոպոսներ⁶, որոնցից միայն յոթն էին ներկայացնում Արևմուտքը⁷: ժողովի մասնակից եպիսկոպոսների մասին Եվսեբիոս Կեսարացին

կեական հանգանակում ժողովի սկիզբը թվագրված է 325 թ. հունիսի 19-ով, ինչն էլ արձանագրվել է հետագայում կազմված ժողովի գործքում (տե՛ս *Sacrorum conciliorum nova amplissima collectio* (ed. by J.-D. Mansi). Florens, 1786, V. VI, p. 955): Տիեզերածղովի աշխատանքների սկիզբը հունիսի 19-ով են թվագրում նաև ասորական ակտերը և Ալեքսանդրիական ժամանակագրությունը: Իսկ Կ. Պոլսի Աստիկոս պատրիարքին վերագրվող կողբքներից մեկում նիկեական ժողովի ընթացքը թվագրված է հունիսի 14 – օգոստոսի 25-ով, որն «Ամալներում» արձանագրել է նաև Բորոնիոսը: Քանի որ այդ տեղեկությունները փաստական հիմնավորում չունեն, մասնագիտական գրականության մեջ առաջադրվել է փոխզիջումային այն մոտեցումը, թե ժողովի մասնակիցները պետք է ժամանեին մայիսի 20-ին, ժողովն աշխատանքները սկսել է հունիսի 14-ին, հունիսի 19-ի հանդիսավոր նիստում հաստատվել է հավատո հանգանակը, իսկ օգոստոսի 25-ին ժողովն ավարտել է իր աշխատանքները (մանրամասները տե՛ս *Hefele G.-J. Conciliengeschichte. Bd. I. Zweite Auflage. Freiburg, 1873, S. 314*). Ի դեպ, այն, որ տիեզերածղովն իր աշխատանքներն ավարտել է օգոստոսին, անուղղակի հիշատակում է նաև Եվսեբիոս Կեսարացին: Նա գրում է, որ եզրափակիչ նիստը կայացել է կայսերական պալատում՝ ի նշանավորումն Կոստանդինի զահակալման 20-ամյակի: Կոստանդինը կայսր է հռչակվել 306 թ. աշնան սկզբին և հետևաբար կարելի է լիովին հավաստի համարել այն, որ Նիկեայի 325 թ. տիեզերական ժողովն իր աշխատանքներն ավարտել է օգոստոսի 25-ին (մանրամասները տե՛ս *Евсевій Панфіл. О жизни Блаженного Василевса Константина*, кн. III, гл. 15):

Ժողովական եպիսկոպոսների թվի մասին մեզ հասած տեղեկությունները ևս բավականին հակասական են: Այսպես, Եվսեբիոս Կեսարացին գրում է, որ ժողովին մասնակցել են 250 եպիսկոպոս (տե՛ս *Евсевій Панфіл. О жизни Блаженного Василевса Константина*. СПб., 1850, кн. III, гл. 9), Կոստանդին կայսրը վկայում է ժողովական 300 եպիսկոպոսների մասին (տե՛ս *Соқрат Схоласстик. Церковная история*, кн. I, гл. 9, с. 27): Իրադարձությունների ակտիվ մասնակից Աթանաս Ալեքսանդրացին հիշատակում է 300 (տե՛ս *Св. Афанасиу Великий. Защитительное слово противъ арианъ / Св. Афанасиу Великий. Творения в четырех томах. Т. I, М., 1994, с. 315; Գրքի Պատմություն* / *Св. Афанасиу Великий. Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 149*), «300-ից ավել կամ պակաս» (տե՛ս *Св. Афанасиу Великий. Послание епископа Аѳанасіа къ монахамъ повсюду пребывающим о томъ что сделано арианаму при Констанциі (= история ариан) / Св. Афанасиу Великий. Творения в четырех томах. Т. II, М., 1994, с. 159*), ինչպես նաև՝ «318 եպիսկոպոս» (տե՛ս *Св. Афанасиу Великий. Послание Епископовъ египетскихъ и ливійскихъ (въ числе девяноста) и блаженного Аѳанасіа къ досточестнейшамъ Епископамъ африканским, против ариан / Св. Афанасиу Великий. Творения в четырех томах. Т. III, с. 277*): Սոզոմենոսը հայտնում է «մոտ 320» թիվը (տե՛ս *Созомен Эрмиу Соломинский. Церковная История. СПб, 1851, кн. I, гл. 17, с. 63*), իսկ Թեոդորետը, վկայակոչելով Եվսեբիոս Անտիոքացուն, հիշատակում է 270 թիվը, թեև մեկ այլ հատվածում խոսում է «318 հայրերի» մասին (տե՛ս *Феодорит еписк. Кирский. Церковная История. СПб., 1860, кн. I, гл. 7, с. 42; гл. 8, с. 46*): 318 եպիսկոպոսների մասին է հիշատակում նաև Սոկրատես պատմիչը (տե՛ս *Соқрат Схоласстик. Церковная история*, кн. I, гл. 8, с. 21):

⁶ Այդ տարածայնությունները բացատրվում են ժողովական որոշումներն ստորագրած եպիսկոպոսների տարբեր ցանկերի առկայությամբ: Դրանցից հնագույնները համարվում են ասորական (IV դարի առաջին կես) և հունական (VI դար) տեքստերը: Այդ և մնացյալ ցանկերը 1898 թ. հրատարակվել է Գ. Գելցերի խմբագրությամբ: Դրանց շարքում զետեղված է նաև Աթանաս Ալեքսանդրացուն վերագրվող կողբքը, որտեղ հիշատակվում են նիկեական ակտերն ստորագրած 220 եպիսկոպոսների անուններ (այդ մասին մանրամասները տե՛ս *Patrum nikaenorum nomina. Scriptores sacri et profani. Lipsiae, 1898, tasc. 11, col. LX-LXIV*: Աթանաս Ալեքսանդրացու կողբքի գոյության փաստը հավաստում է նաև Սոկրատես պատմիչը (տե՛ս *Соқрат Схоласстик. Церковная история*, кн. I, гл. 13, с. 36):

գրում է. «Աստծու սպասավորներից ոմանք հայտնի էին խոսքի իմաստությամբ, մյուսները զարդարված էին սխրագործությամբ և խստակեցությամբ, իսկ երրորդներն առանձնանում էին բարքերի խոնարհությամբ»⁸: Նրանց հոգևոր նկարագրությունը լրացնում է Թեոդորետը, որը գրում է, թե ժողովական եպիսկոպոսներից «Շատերը զարդարված էին առաքելական շնորհներով, մեծ թիվ էին կազմում նրանք, ովքեր Պողոս առաքյալի խոսքերով ասած՝ «իրենց մարմնի վրա կրում էին Հիսուս Քրիստոսի վերքերը: ... Կարճ ասած, այստեղ կարելի էր մի տեղում հավաքված տեսնել մարտիրոսների բազմության»⁹:

Այն, որ 325 թ. Նիկեայի տիեզերաժողովը «նախապես պատրաստված սխեմայով» չի գործել, կարելի է փաստել ինչպես մասնակից եպիսկոպոսների «դոգմատիկական կազմի», այնպես էլ բուն ժողովական քննարկումների վերլուծությամբ:

Նիկեական ժողովի մասնակիցների դոգմատիկական կողմնորոշումների մասին ևս տարակարծություն է տիրում: Եվ եթե դասակարգման հիմքում դնենք բացառապես հավատքային գործոնը, ապա ավելի քան ակնհայտ կդառնա, որ նիկեական ժողովի մասնակիցներին պետք է դասակարգել երեք հիմնական խմբի՝ **արիոսականներ** (հակաերրորդաբաններ), **հակաարիոսական երրորդաբաններ և պահպանողական երրորդաբաններ**:

Մեզ հասած վավերագրերը թույլ են տալիս փաստել, որ արիոսական հոսանքը ներքին տարանջատվածության պատճառով բավականին թույլ համախմբվածություն է ունեցել: Հոսանքը կազմել են 13-17 (որոշ աղբյուրների համաձայն՝ 22) եպիսկոպոսներ¹⁰: Նրանք գրեթե բոլորն էլ եղել են համակողմանի կրթված հոգևորականներ, անտիոքյան աստվածաբանական դպրոցի շրջանավարտներ, որոնք եկեղեցական պատմությանը հայտնի են նաև «աստվածաբանների ղուկիանոսական խմբակ» անունով: Սակայն աստվածաբանական-երրորդաբանական հարցերում նրանք կապված էին միայն «ընդհանուր կողմնորոշմամբ» և դատելով սկզբնաղբյուրներից՝ **աչքի են ընկել դոգմատիկական տարասեռ ընթրումներով**¹¹: Ի հակադրություն տիրապետող տեսակետի՝ հարկ ենք հա-

⁷ Սկզբնաղբյուրներում հիշատակվող արևմտյան եպիսկոպոսներն են՝ *Յոզիա Կորդուբացին*, *Նիկազի Դիժոնացին* (Գալիայից), *Ցեցիլիան Կարթագենացին* (Հյուսիսային Աֆրիկայից), *Դոմնոս Ստրիդոնացին* (Պանոնիայից), *Եվստաթեոս Միլանացին* (Իտալիայից), *Մարկոս Կալարիացին* (Իտալիայից) և *Հռոմի Սիլվեստր* քահանայապետի անունից՝ *Վիկտոր* (Վիտոն) և *Վիկենտիոս* քահանաները:

⁸ Տե՛ս *Евсевій Панфіл*. О жизни Блаженного Василевса Константина, кн. III, гл. 9.

⁹ Տե՛ս *Феодорит еписк. Кирский*. Церковная История, кн. I, гл. 7, с. 42-43.

¹⁰ Ռուփինոսը և Գելասիոս Կիզիկացին հիշատակում են արիոսական 17 եպիսկոպոսների, Թեոդորետը՝ 13 (տե՛ս *Rufinus*. Historia ecclesiastica, PL, T. 21, lib. I, col. 1, p. 5; *Gelasii Cyziceni*. Historia Concilii Nicaeni, PG, T. 85; lib. II, col. 7; *Феодорит еписк. Кирский*. Церковная История, кн. I, гл. 5, с. 38, гл. 6, с. 39, гл. 7, с. 45), իսկ Փիլոստորգիոսը՝ 22 (տե՛ս Сокращение церковной истории Филосторгия (сделанная патриархом Фотием). СПб., 1854. Дополнения къ истории Филосторгия, с. 425-426).

¹¹ Փիլոստորգիոսի հաղորդած տեղեկությունների համաձայն Եվսեբիոս Նիկոմեդացին, ի հակադրություն Արիոսի, Հայր և Որդի Աստծու փոխհարաբերության հարցում պատրաստ էր ընդունել այն տեսակետը, թե «Հայրը և Որդին հավասար են»: Մարիս Քաղկեդոնացին և Թեոֆիլոս Նիկեացին գտնում էին, որ «Հայրը Որդու ծնունդից առաջ էլ է Հայր եղել, քանի որ

մարումն ցել, որ **արիոսականները երբևէ իրենց դոգմատիկական տեսակետները եկեղեցում արմատավորելու հավակնություններ չեն ունեցել**: Լինելով ընդգծված ռացիոնալիստներ՝ հոսանքի ներկայացուցիչները փորձել են դոգմատիկական հարցերը հավատքային դաշտից տեղափոխել «դիալեկտիկական-վերլուծական» ոլորտ:

Երկրորդ հոսանքը կազմել են **արիոսականությանն արմատապես հակադրվող ուղղադավան երրորդաբանները** (Ալեքսանդր Ալեքսանդրացի, Յոզիա Կորդուբացի, Եվստաթես Անտիոքացի, Մակարիոս Երուսաղեմացի, Մարկելոս Անկյուրիացի և ուրիշներ): Նիկեայում այս հոսանքը ևս համեմատական փոքրամասնություն է կազմել: Ուսյալ աստվածաբան ուղղադավան եպիսկոպոսների այս հոսանքը **ձգտել է ստեղծել «տիեզերական հավատո հանգանակ», որը մեկընդմիջտ կարգելակեր հակաերրորդաբանության մուտքը եկեղեցի**: Բայց, քանի որ եպիսկոպոսների այս խումբը ևս փոքրամասնություն էր կազմում, հարկ է փաստել, որ նրանք էլ ունեցել են գրեթե նույնական հնարավորություններ, ինչ արիոսականները: **Եվ հավասար պայմաններում նրանց ձեռք բերած հաղթանակն ուղղակի վկայում է հոսանքի կենսունակության փաստը**:

Նիկեական ժողովում բացարձակ մեծամասնություն է կազմել երրորդաբանների **պահպանողական հոսանքը**: Դոգմատիկական առումով այս հոսանքի կազմը համալրվել է այն եպիսկոպոսներով, որոնք «հավատքային հարցերը ընկալել են իբրև տնօրինություն», իբրև բանականության համար անհաս և ճանաչողության համար անընկալելի «երկնային պարզև»: Նրանց «պահպանողականությունն» արտահայտվել է այն բանում, որ անասան կերպով պաշտպանել են «եկեղեցական ավանդությունը» և անվերապահորեն մերժել ավանդությունից դուրս ընկած դոգմատիկական ամեն մի «նորարարություն»: Վիճաբանական հիմնահարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքով այս հոսանքի անբաժան տարրը պետք է համարել նաև Եվսեբիոս Կեսարացու գլխավորած «որիգենական» թևը: Ի տարբերություն նիկեական ժողովի արմատական հոսանքների՝ որիգենականները դոգմատիկայի ասպարեզում երկու ոտքով կանգնած էին ստորադասության վարդապետության դիրքերում:

Ահա այդ ամենն էլ թույլ են տալիս վստահաբար պնդել, որ **Նիկեայի 325 թ. տիեզերական ժողովը «նախնական սցենար» չի ունեցել: Նաև դա էր պատճառը, որ ժողովն ընթացել է բուն քննարկումների մթնոլորտում, որտեղ արտահայտվելու և սեփական տեսակետները պաշտպանելու իրական հնարավորություն են ունեցել և այդ հնարավորությունից լիարժեքորեն օգտվել են դոգմատիկական բոլոր հոսանքները՝ և՛ արիոսականները, և՛ ուղղադավան ջատագովները, և՛ պահպանողական երրորդաբանները**:

Եկեղեցական պատմիչները հավաստում են, որ Նիկեայի տիեզերական ժողովն իր դոգմատիկական գործունեությունն սկսել է Հայր և Որդի Աստծու փոխ-

Որդի ծնելու ուժ ունենալ»: Ղևոնդիոս Կապադովկիացին (հետագայում՝ Անտիոքացի) և Անտոնիոս Տարսոնացին «բարեպաշտությունն անխաթար էին պահել»: Իսկ Աստերիոսի մասին պատմիչը պնդում է, թե նա «նույնպես խեղաթյուրեց իր վարդապետությունը, գրավոր և բանավոր վկայելով, որ Որդին Հոր էության անխաթար պատկերն է», տե՛ս Сокращение церковной истории Филосторгия (сделанная патриархом Фотием), кн. II, гл. 15, с. 329.

հարաբերության հարցի քննարկումով: Ռուփինոսը գրում է, որ այդ նպատակով քննարկումներին մասնակցելու համար հրավիրվել է նաև Արիոսը: Եվ երբ նա սկսել է պաշտպանել իր վարդապետության հիմնադրույթները, ժողովն ըմբոստացել է նրա դեմ՝ հայտարարելով, թե «դա աստվածամարգանք է», և շատերն անգամ «գոցել են ականջները»¹²:

Նույն ճակատագրին է արժանացել նաև արիոսականների կազմած և Նիկոմեդիայի ու Նիկեայի եպիսկոպոսների խմբագրած **հանգանակը**, որը **տիեզերական ժողովի քննարկմանն է ներկայացրել Եվսեբիոս Նիկոմեդացին**: Սակայն **ժողովական եպիսկոպոսների բացարձակ մեծամասնության առաջարկով այդ հանգանակը նույնպես մերժվել է և ոչնչացվել տեղում**¹³:

Դրան հաջորդել է տիեզերական ժողովի դոգմատիկական քննարկումների երկրորդ փուլը, որի գլխավոր ու գործուն մասնակիցը որիզենականների պարագլուխ **Եվսեբիոս Կեսարացին** էր՝ Կոստանդին կայսեր մերձավորագույն հոգևորականը: Նա ժողովի քննարկմանն է ներկայացրել Կեսարիայի եկեղեցու «Մկրտության հանգանակի» հիման վրա կազմած հանգանակ, որտեղ բնագրից քաղվել էին միայն վիճաբանական հիմնահարցին վերաբերող հատվածները և

¹² Տե՛ս նույն տեղում, գիրք I, գլ. 5: Հմմտ. **Տվ. Ափանասի Վեղիկի**. Послание Епископовъ египетскихъ и ливіи́скихъ (въ числе девяноста) и блаженногo Аанасіа къ досточестнейшамъ Епископамъ африканскимъ, противъ аrian, с. 280.

¹³ Արիոսական հանգանակի հիմնադրույթները տե՛ս **Տվ. Ափանասի Վեղիկի**. Послание о томъ, что Соборъ Никеи́скіи, усмотревъ коварство Евсевіевыхъ приверженцевъ, определе́ние свое противъ аrianско́у ереси изложилъ прилучнымъ образомъ и благочестно, с. 406. Այդ մասին տե՛ս նաև **Փեոդորտ Եպիսկ. Կիրսկի**. Церковная исторія, кн. I, гл. 8, с. 46.

Աբանաս Ալեքսանդրացին գրում է, որ քննարկումների ընթացքում ուղղադավան եպիսկոպոսներն առաջարկեցին հանգանակ ներմուծել «Որդի՝ Աստծուց» եզրը: Նրանք առաջարկել են հանգանակում հավելել նաև այն, որ «Բանն «... է ճշմարիտ Աստուած» (Ա Յովհ., 5: 20), որ Բանը Հայր Աստծու «... լոյսն ... է փառքի եւ բուն պատկերը նրա էութեան» (Եբր., 1: 3): Բայց քանի որ արիոսականները ևս համամիտ էին այդ եզրերին և առաքելական խոսքին դիմելով պնդում էին, թե «... մէկ Աստուծ կայ, Հայր, որ ստեղծել է ամեն բան» (Ա Կոր., 8: 6), որ «մենք ևս Աստծու պատկեր ենք համարվում և Աստծու փառք» և, անգամ, «մորեխն ու թրթուրն էլ են համարվում Աստծու ուժ» (Յովէլ., 2: 25), և որ մարդիկ էլ յուրային են Աստծուն, քանի որ նա մարդկանց եղբայրներ է անվանում (տե՛ս Եբր., 2: 11), ապա այդ փորձերը կատարյալ անհաջողության մատնվեցին, տե՛ս **Տվ. Ափանասի Վեղիկի**. Послание Епископовъ египетскихъ и ливіи́скихъ (въ числе девяноста) и блаженногo Афанасіа къ досточестнейшамъ Епископамъ африканскимъ, противъ аrian, с. 281-282: Հմմտ. **Փեոդորտ Եպիսկ. Կիրսկի**. Церковная исторія, кн. I, гл. 12, с. 48-49.

Այդ վեճերի մասին Եվսեբիոս Կեսարացին գրում է. «Այդ ժամանակ ոմանք սկսեցին մեղադրել իրենց մերձավորներին, մյուսները պաշտպանվում էին և անվանարկում մեկը մյուսին: Ընդ որում, ինչպես այս, այնպես էլ մյուս կողմից բազմաթիվ առարկություններ արտահատվեցին և սկզբնական շրջանում մեծ վեճ ծագեց, կայսրն առանց չարության լսեց բոլորին, ուշադրությամբ ընդունեց առաջարկությունները և քննարկելով այս կամ այն կողմի առաջարկների մանրամասները՝ կամաց-կամաց սկսեց հաշտեցնել համառ մրցակիցներին: Հունարենով ... գրուցելով նրանցից յուրաքանչյուրի հետ, ... ոմանց համոզելով, մյուսների հետ խոսելով, այլերին, ովքեր լավ էին խոսում, գովելով և յուրաքանչյուրին հակելով համամտության, նա վերջիվերջո տեսք տվեց վիճաբանական հարցին վերաբերող բոլոր հասկացություններին և տեսակետներին», **Եվսեւիւ Բանփիլ**. О жизни Блаженногo Василевса Константина, кн. III, гл. 13. Ըստ էության նույնը կրկնում է նաև Սոզոմենոսը, տե՛ս **Տոզոմեն Էրմիւ Տալամինսկի**. Церковная Исторія, кн. I, гл. 20, с. 69-70.

դրանք լրացվել էին աստվածաբանական դատողություններով: Հիշատակություններ են պահպանվել նաև այն մասին, որ կեսարիական հանգանակի նկատմամբ ժողովական եպիսկոպոսների բացարձակ մեծամասնությունը «բարեհաճ վերաբերմունք դրսևորեց»: Դրա պատճառն անկասկած այն էր, որ վերջինս կառուցված էր եկեղեցական ավանդության (հեղինակության) վրա և ամենակարևորը՝ դոգմատիկական նշանակություն ունեցող բոլոր դրույթները հիմնավորված էին բացառապես Աստվածաշնչով¹⁴:

Այդ տեսանկյունից էական ճշգրտումների կարիք ունի նաև այն տեսակետը, թե իբր Կոստանդին կայսրը հավանություն է տվել Եվսեբիոս Կեսարացու հանգանակին և Զոզիա Կորդուբացու (կամ ուղղադավան այլ եպիսկոպոսի) ազդեցությամբ առաջարկել է հանգանակը լրացնել «ομοουσιος» (համագոյ) եզրով, ինչն էլ հաստատվել է տիեզերական ժողովի կողմից¹⁵: Այդ տեսանկյունից ընդունելի է միայն այն պնդումը, որ **նիկեական հանգանակի հիմքում ընկած է եղել Եվսեբիոս Կեսարացու հանգանակը**: Սակայն խոսք անգամ չի կարող լինել սոսկական կրկնության մասին: Ծիշտ այդպես էլ ճշմարտությանը լիովին անհարիր է այն պնդումը, թե այդ հանգանակները տարբերվում են միայն «համագոյ» եզրով: Իրականում երկու հանգանակների միջև առկա են աստվածաբանական բնույթի էական մի շարք տարբերություններ, ինչն ուղղակի հավաստում է, որ քննարկման ներկայացված հանգանակի շուրջ նույնպես քննարկումներ են ընթացել, որոնց ընթացքում կատարվել են մի շարք էական լրացումներ:

Այդ ամենն էլ թույլ է տալիս պնդել, որ չնայած որոշակի **ընդհանրություններին՝ եվսեբիոսական և նիկեական հանգանակների միջև առկա են նաև էա-**

¹⁴ Եվսեբիոս Կեսարացու ներկայացրած հանգանակը հռչակում էր. «Հավատում ենք մի Աստծու, Ամենակալ Զորը, բոլոր երևելիների և աներևույթների Արարչին, և մի Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Բանին, Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, կյանք՝ կյանքից, Միածին Որդուն, բոլոր արարածների Անդրամիկին, որը բոլոր դարերից առաջ ծնվել է Հայր Աստծուց, որով եղավ ամեն բան, որը մեր փրկության համար անձնավորվեց և բնակվեց մարդկանց մեջ, և տառապեց, և երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց Զոր մոտ և գալու է փառքով դատելու ողջերին և մեռյալներին: Հավատում ենք և Սուրբ Զոզուն: Հավատում ենք, որ նրանցից յուրաքանչյուրը կեցություն ունի, որ Հայրն իրական Հայր է, Որդին՝ իրական Որդի, Սուրբ Զոզին՝ իրական Սուրբ Զոզի: Այդպես էլ մեր Տերն աշակերտներին ուղարկելով առաքելության (քարոզելու)՝ ասաց. «զմացէ՛ք ուրեմն աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Զօր եւ Որդու եւ Սուրբ Զոզու անունով» (Մատթ., 28: 19): Դա մենք հաստատում ենք, այդպես մտածում, այդպես ենք դավանել, այդ հավատին կմնանք մինչև մահ և կանգնելով այդ հավատի դիրքերում՝ նզովում ենք ամեն մի անաստված հերձված», *Сократ Схоластик*. Церковная история, кн. I, гл. 8, с. 22: Բառացիորեն նույնն է հաղորդում նաև Թեոդորետը, տե՛ս *Феодорит еписк. Кирский*. Церковная история, кн. I, гл. 12, с. 62-63.

¹⁵ Տե՛ս *Лебедев А. П.* Вселенские Соборы IV и V вековъ (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениемъ школъ александрийской и антхоуи́ской), с. 37-41; *Поснов М. Э.* История Христианской Церкви (до разделения Церквей – 1054 г.), с. 343: Պաշտպանելով այդ տեսակետը՝ ծայրահեղության ընդգծված հակում ունեցող Ա. Կարտաշևը առանց որևէ հիմնավորման պնդում է, թե քննարկման ներկայացված հանգանակում «աստվածաբանական նրբին փոփոխությունը» Աթանաս Ալեքսանդրացու հետ համախորհուրդ նախապատրաստել էր «եպիսկոպոսների ընտրյալ փոքրամասնությունը»՝ Զոզիա Կորդուբացին, Ալեքսանդր Ալեքսանդրացին, հավանական է նաև՝ Մարկելոս Անկյուրիացին և Եվստաթոս Անտիոքացին, տե՛ս *Карташев А. В.* Вселенские Соборы, с. 33-34:

կան տարբերություններ: Այդ եզրահանգումը կարելի է փաստել եվսեբիոսական և նիկեական հանգանակների զուգադրությամբ:

Եվսեբիոս Կեսարացու հանգանակ

«Հավատում ենք մի Աստծու, Ամենակալ Յորդը, ամենայն երևելիների և աներևույթների Արարչին,

և մի Տեր Յիսուս Քրիստոսի՝ Աստծու Բանին, Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, կյանք՝ կյանքից, Միածին Որդուն, բոլոր արարածների Անդրանիկին, որը բոլոր դարերից առաջ ծնվել է Հայր Աստծուց, որով եղավ ամեն բան,

որը մեր փրկության համար անձնավորվեց և բնակվեց մարդկանց մեջ, և տառապեց, և երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց Յոր մոտ և գալու է փառքով դատելու ողջերին և մեռյալներին:

Հավատում ենք և Սուրբ Հոգուն: Հավատում ենք, որ նրանցից յուրաքանչյուրը գոյություն և կեցություն ունի, որ Հայրն իրական Հայր է, Որդին՝ իրական Որդի, Սուրբ Հոգին՝ իրական Սուրբ Հոգի: Այդպես էլ մեր Տերն աշակերտներին ուղարկելով առաքելության (քարոզելու)՝ ասաց. գնացե՛ք **ուրեմն աշակերտ** դարձրե՛ք **բոլոր ազգերին, նրանց** մկրտեցե՛ք **Յոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ., 28: 19):

Դա մենք հաստատում ենք, այդպես մտածում, այդպես ենք դավանել, այդ հավատքին կմնանք մինչև մահ, և այդ հավատի դիրքերում կանգնելով նզովում ենք ամեն մի անաստված հերձվածի»

Քանի որ հանգանակի «ամենայն երևելիների և աներևույթների Արարչին» հատվածում արարչական հատկանիշը բնութագրված էր հունարեն «*απαντων*» եզրով, որը կարող էր մեկնաբանվել «առանց բացառության բոլորի», հետևաբար նաև «Որդի և Ս. Հոգի Աստծու արարիչ» իմաստով, ժողովական հայրերն այն փոխարինեցին ավելի պարզ «*παντων*» եզրով, որը նման մեկնաբանության տեղիք տալ այլևս չէր կարող: Հաշվի առնելով այն փաստը, որ փիլիսոփայության (նաև՝ հուդայականության) մեջ «*λογου*» եզրը կիրառվում էր «միջնորդ ուժ» նշանակությամբ՝ հետագա թյուրիմացություններից զերծ մնալու միտումով ժողովական հայրերի որոշմամբ հանգանակի երկրորդ անդամի «Աստծու Բան (του θεου

Նիկեական հանգանակ¹⁶

«Հավատում ենք մի Աստծո՝ ամենակալ Յորդը, ամենայն երևելիների և աներևույթների արարչին:

Եվ մի Տեր Յիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդուն՝ ծնված Հայր Աստծուց Միածին, այսինքն Յոր էությունից, Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած, համագոյակից Յորդը, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա:

Որ մեզ՝ մարդկանց և մեր փրկության համար երկնքից իջնելով մարմնացավ և մարդացավ, մահացավ [տառապեց] և երրորդ օրը հարություն առավ և գալու է դատելու կենդանիներին և մեռյալներին:

Հավատում ենք և Սուրբ Հոգուն:

Իսկ ովքեր ասում են, թե կար ժամանակ, երբ (Որդին) չկար, որ Նա մինչև ծնունդ գոյություն չուներ, կամ թե Որդին ոչնչից (ոչեից) եղավ, կամ այլ Հորից է կամ բնությունից, կամ որ նա ստեղծված է կամ փոփոխելի կամ այլալեզի, այդպիսիներին կաթողիկե և առաքելական եկեղեցին նզովում է»

¹⁶ Деяния Вселенских Соборъ, Т. I, с. 69-70.

λογου)» եզրը փոխարինվեց «Աստծու Որդի (τν υιου θεου)» եզրով:

Քննարկումների արդյունքում նիկեական ժողովը որոշեց հանգանակի երկրորդ անդամից դուրս հանել նաև աստվածաշնչական «անդրամիկը բոլոր արարածների» (**Կող., 1: 15**) ձևակերպումը: Շարժառիթն ավելի քան ակնհայտ էր: Հանգանակային այդ դրույթը տարբեր մոդիֆիկացիաներով օգտագործվում էր նաև արիոսական վարդապետության մեջ, որն այդ ձևակերպումով մատնանշում էր «Քրիստոսի առաջին արարված» լինելը: Գիշտ նույն նկատառումներով փոփոխության ենթարկվեց նաև առաջարկված հանգանակի «Միածին Որդուն, ... որը բոլոր դարերից առաջ ծնվել է Հայր Աստծուց» ձևակերպումը, քանի որ դա նույնպես կարող էր մեկնաբանվել «առաջին արարված» նշանակությամբ: Խնքարական այդ փոփոխությունների արդյունքում նիկեական ժողովը հանգանակում «Էակից» եզրն ամրագրեց փոքրիկ, բայց աստվածաբանական չափազանց էական բացատրությամբ, «այսինքն՝ Հոր էությունից» ձևակերպումով: Իսկ «Ծնված» եզրի բովանդակությունը հստակեցվեց երրորդաբանական առանցքային նշանակության «համագոյ» եզրով: Այդ փոփոխությունների արդյունքում հանգանակային այդ անդամն ստացավ հետևյալ տեսքը. «ծնված Հայր Աստծուց Միածին, այսինքն՝ Հոր էությունից ... համագոյակից Հորը, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա»:

Եվ, վերջապես, երրորդաբանական ուղղադավան վարդապետությունն արիոսական հակաերրորդաբանությանը հակադրելու և հետագա հնարավոր թյուրըմբռումները կանխարգելելու միտումով՝ նիկեական հանգանակում Հիսուս Քրիստոս բնութագրվեց **«ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ... ծնունդ և ոչ արարած»** եզրերով, որով հանգանակն ուղղակի հակադրվեց բոլոր ժամանակների հակաերրորդաբանական հոսանքներին: Հանգանակի երրորդ՝ «Հավատում ենք և Սուրբ Հոգուն» անդամն անփոփոխ վերահաստատվեց: Իսկ Ս. Երրորդության կեցությունը փաստող «Հավատում ենք, որ նրանցից յուրաքանչյուրը գոյություն և կեցություն ունի, որ Հայրն իրական Հայր է, Որդին՝ իրական Որդի, Սուրբ Հոգին՝ իրական Սուրբ Հոգի» հատվածն ամբողջովին դուրս բերվեց հանգանակից: Քաջ գիտակցելով, որ հանգանակային այդ հատվածն ուղղված է մոդալիստական հակաերրորդաբանության դեմ՝ Աստվածային Երրորդության անձերի բնութագրման համար նիկեական հայրերի կողմից հիմք ընդունվեց նրանց զանազանությունը՝ անսկիզբ՝ Հայր Աստված, Հորը համագոյ Միածին Աստված Որդի» և Հայր Աստծուց բխող Ս. Հոգի¹⁷: Հանգանակը եզրափակվեց ընդգծված հակաարիոսական բանադրանքներով:

Այդ ամենով հանդերձ՝ Եվսեբիոսական հանգանակն աստվածաբանական նոր տեսք ստացավ և պատմական անանց հնչեղություն ձեռք բերեց: Իսկ այդ ամենից ուղղակի հետևում է, որ **նիկեական հավատո հանգանակը կազմվել է աստվածաբանական բուռն քննարկումների արդյունքում** և, հետևաբար, արժանատական վերանայման կարիք ունի այն տեսակետը, թե իբր նիկեական հանգանակը կազմվել է Եվսեբիոս Կեսարացու հանգանակին ավելացնելով միայն «համագոյ» եզրը:

¹⁷ Տե՛ս *Карташев А. В.* Вселенские Соборы, с. 36.

Սիկեայի 325 թ. տիեզերածողովի Հավատո հանգանակը հետևյալն է.

Ըստ տիեզերածողովի գործքի	Ըստ Աթանաս Ալեքսանդրացու	Ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու
<p>«Հավատում ենք մի Աստուծո՝ ամենակալ Հորը, ամենայն երևելիների և աներևույթների արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսի՝ Աստուծու Որդուն՝ ծնված Հայր Աստուծուց Միածին, այսինքն՝ Հոր էությունից, Աստված՝ Աստուծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստուծուց, ծնունդ և ոչ արարած, համագոյակից Հորը, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա: Որ մեզ՝ մարդկանց և մեր փրկության համար երկնքից իջնելով մարմնացավ և մարդացավ, մահացավ [տառապեց] և երրորդ օրը հարություն առավ և գալու է դատելու կենդանիներին և մեռյալներին: Հավատում ենք և Սուրբ Հոգուն: Իսկ ուլքեր ասում են, թե կար ժամանակ, երբ (Որդին) չկար, որ Նա մինչև ծնունդ գոյություն չուներ, կամ թե Որդին ոչնչից (ոչէից) եղավ, կամ այլ Հորից է կամ բնությունից, կամ որ նա ստեղծված է կամ փոփոխելի կամ այլայլելի, այդպիսիներին կաթողիկե և առաքելական եկեղեցին նզովում է»:</p>	<p>«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, Արարիչ ամենայն երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ծնեալ ի Հաւրէ, Միածին, այսինքն ի էութենէ Հաւր, Աստուած՝ յԱստուծո, Լոյս՝ ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ եւ ոչ արարեալ, համագոյակից [բնակից] Հաւր՝ որով ամենայն եղեւ յերկինս եւ յերկրի, որ վասն մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան էջ ի երկինս, մարմնացաւ, մարդացաւ, տառապեց, յարեաւ յաւուր երրորդի, եւ ել յերկինս, եւ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս: Եւ ի Հոգին Սուրբ: Եւ որք ասենն թէ էր երբեմն զի չէր զՈրդին Ասյուծոյ, եւ թէ յոչընչէ եղեւ Նա, կամ յայլմէ գաւրութենէ եւ ի էութենէ, կամ փոփոխելի եւ այլայլելի, գայնպիսին նզովէ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի»:¹⁸</p>	<p>«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայր ամենակալ, ամենայն երեւելեաց եւ աներեւութից արարիչ: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ծնեալ ի Հաւրէ, Միածին, այսինքն է ի բնութենէ Հաւր, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ եւ ոչ արարեալ, բնակից Հաւր՝ որով ամենայն եղեւ յերկինս եւ յերկրի: Որ վասն մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան էջ եւ մարմնացաւ եւ մարդացաւ, մեռաւ եւ յարեաւ յաւուր երրորդի, եւ ել յերկինս, եւ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս: Եւ ի Հոգին սուրբ: Եւ որք ասենն թէ էր երբեմն զի չէր, եւ թէ յոչընչէ եղեւ, կամ յայլմէ գաւրութենէ եւ ի բնութենէ, կամ փոփոխելի եւ այլայլելի զՈրդին Ասյուծոյ, գայնպիսին նզովէ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի»:¹⁹</p>

Եկեղեցական պատմության հետագա իրադարձություններն աներկբա ցույց տվեցին, որ նիկեական հանգանակի ընդունումից հետո անգամ աստվածաբանական-երրորդաբանական վիճաբանությունները չդադարեցին: Ընդհանրական եկեղեցու որոշ կառույցների, հավասարապես նաև աստվածաբանական մտքի համար դեռևս որոշակի ժամանակ պահանջվեց նիկեական երրորդաբանությունն ընկալելու համար, և այդ գործընթացը շարունակվեց շուրջ 55 տարի:

¹⁸ *Св. Афанасии Великий*. Послание къ Императору Іовіану / *Св. Афанасии Великий*. Творения в четырех томах. Т. III, с. 177.

¹⁹ Գիրք ֆոթոց, Երուսաղեմ, 1994, էջ 13:

Այդ ամենը թույլ են տալիս փաստել, որ **Նիկեայի 325 թ. տիեզերական ժողովը և նրա կողմից հաստատած Հավատամքը նշանավորեցին IV դարի դոգմատիկական-երրորդաբանական վիճաբանությունների առաջին փուլի ավարտը**: Նիկեական աստվածաբանության վերջնական հաղթանակի համար ընդհանրական եկեղեցին դեռևս պետք է ապրեր երրորդաբանական-դոգմատիկական վիճաբանությունների և անհաշտ պայքարի բարդ ու հակասական մի ողջ դարաշրջան:

НИКЕЙСКИЙ СИМВОЛ ВЕРЫ

A. G. Kalashyan

Никейский Символ веры – важная веха раскрытия в интерпретации Церковно-тринитарного догмата. Он является закономерным результатом богословского столкновения глубоко разделенных “тонких аристократических” догматических партий и богословских школ Востока. На основе бурных богословских прений александрийских, антиохийских и оригенистских тринитариев Символ веры.

Никейский Символ веры – полномочное, “вселенское” решение тринитарного вопроса, поэтому он получил статус государственного и общеобязательного решения для всей Церкви.

THE SYMBOL OF NICENE FAITH

A. G. Kalashyan

The symbol of Nicene Faith is the important pole in the revelation of the interpretation of the Church Trinitarian dogma. This is natural result of theological issues that have risen between the so called “subtle aristocratic” dogmatic parties and theological schools in the East. On the basis of the active theological debates of the Alexandrian, Antioch and Origenistic Trinitarians the baptismal symbol of the faith acquired a new and deeper dogmatic content. In the result of all the mentioned the symbol of the Nicene Faith was adopted.

The Nicene Faith symbol is the sovereign and “universal” solution to Trinitarian question that is why it has got the state status and has become compulsory resolution for all the Churches.